վերահսկողության մեխանիզմները	Զարգացման ծրագրի համապատասխան ամենամյա հաշվետվություն, որի ձևը և ժամանակացույցը հաստատված կլինի ԿԽ –ի կողմից՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում		
Ֆինանսական աղբյուրներ	Մեփական միջոցներ, համայնքային բյուջե		
<i>Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների ԵՎ շահառու կազմակերպությունների հետ</i>			
Նպատակների սահմանում	Կրթական գործընթացի մանկավարժական, ֆինանսական, սոցիալական, մասնագիտական, հետազոտական, աշխատանքների ապահովում		
խնդիրների սահմանում	<ul style="list-style-type: none"> Որոնել և գտնել դպրոցի մանկավարժների և սովորողների կրթության և ինքնակրթության որակի, ուսումնական միջավայրի, ակտիվացման համար անհրաժեշտ կազմակերպություններ Շարունակել համագործակցությունը հովանավորների, կազմակերպությունների հետ 		

գործողություն		Ժամանակացույց	պատասխանատուներ
	Խրախուսել խոհրդակցական մարմինների նախաձեռնողականությունը շահառու կազմակերպությունների ընտրության հարցում	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, կառավարման խորհուրդ
	Մշտապես կատարելագործել տնօրենության կառավարչական հմտությունները՝ ծրագրերի մշակման, ռեսուրսների ներգրավման ուղղություններով	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, կառավարման խորհուրդ
	Խթանել համագործակցությունը կրթական տեղական կառույցների հետ:	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, կառավարման խորհուրդ, ՏԻՄ
Ակնկալվող վերջնարդյունք	<ul style="list-style-type: none"> • Դպրոցի նկատմամբ հետաքրքրված, շահագրգիռ վերաբերմունքի ձևավորում • Դպրոցի և հովանավորների, աջակից կազմակերպությունների կապի ամրապնդում 		
հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ	Ռիսկ- Գործունեության թերացում, արտաքին միջամտություններ Ռիսկերը մեղմող գործողություն- Մշտապես կապի հաստատում և տեղեկությունների փոխանակում, մշտական միջոցառումների իրականում		
անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ	Հանդիպումներ, վերապատրաստումներ, Տնօրեն, կառավարման խորհուրդ, ՏԻՄ		
վերահսկողության մեխանիզմները	Զարգացման ծրագրի համապատասխան ամենամյա հաշվետվություն, որի ձևը և ժամանակացույցը հաստատված կլինի ԿԽ –ի կողմից՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում		
Ֆինանսական աղբյուրներ	Այլ միջոցներ		

Ուսումնական տարվա ընթացքում խորհուրդը սահմանված կարգով անց է կացնում 8- 10 նիստ,անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ , որտեղ լսվում են խորհրդի կանոնադրությամբ նախատեսված հարցեր, կայացնում որոշումներ: Մանկավարժական խորհրդի առաջին նիստում հաստատվում է խորհրդի նիստերի օրակարգը ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, դպրոցական բաղադրիչի ժամերի բաշխումը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հասարակության կողմից որակյալ կրթության նկատմամբ պահանջարկի ձևավորմանը:

Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթով՝ ըստ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի: Դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության կենտրոնական դեմքն ուսուցիչն է, իսկ կրթակարգի ներդրման հաջողության հիմնարար գործոնը՝ ուսուցիչների մասնագիտական կատարելագործման արդյունավետ իրագործումը:

Կադրային քաղաքականությունը կրել և կրելու է շարունակական բնույթ, մանկավարժական համակազմը համալրվելու է նոր բարձրորակ կադրերով:


Դպրոցի գրեթե բոլոր մանկավարժները մասնակցել են պարտադիր ատեստավորման վերապատրաստման դասընթացներին և շարունակում են մասնակցել ԿԶՆԱԿ- ի կողմից իրականացվող վերապատրաստումներին՝ առկա և առցանց ձևաչափով: Ուսումնասիրում են նոր չափորոշչի պահանջները վերապատրաստումների միջոցով:

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.


ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ			
Ուժեղ կողմ	Դպրոցի մանկավարժները ըստ անհրաժեշտության մասնակցում են մասնագիտական որակավորումների համար կազմակերպվող դասընթացների	«Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին, տարակարգի և կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցանկության պասիվություն	Դիմելի կողմ
	Դպրոցում անցկացվում են բարձր որակի ռազմահայեանասիրական միջոցառումներ և դասեր	Ուսուցչական համակազմում նկատվում է համակարգչային հմտությունների պակաս	
	Դասերի ընթացքում կիրառվում է Kahoot և այլ ծրագրեր դասը ամփոփելու նպատակով	Լաբորատոր փորձեր գրեթե չեն իրականացվում՝ պայմանների և սարքավորումների բացակայության պատճառով	
	Դպրոցը համագործակցում է Կենտրոնական Շիրակ ՏԱԽ-ի հետ		
	Վերապատրաստված ուսուցիչները տիրապետում են նոր ՀՊԶ-ին և նրանից բխող ծրագրային և մեթոդական փոփոխություններին		

Կրթության որակի բարձրացման հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին: Դպրոցի մանկավարժական համակարգի բարելավումը համարվում է դպրոցի ռազմավարություններից մեկը և նախատեսում էմ զարգացնել դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացը՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, պարզևատրման միջոցով խրախուսելուն աջակցելու համար:

Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը



Մանկավարժական կազմն քստ ստաժի



Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

<p>Նպատակների սահմանում</p>	<ul style="list-style-type: none"> • Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավում, դասավանդման արդյունավետության բարձրացում, ուսման որակի բարելավում • Համակարգչային գրագիտության և S2S կիրառման կարողությունների բարձրացում • Համընդհանուր ներառական կրթության կազմակերպման հմտությունների զարգացում 		
<p>Խնդիրների սահմանում</p>	<p>Ուսուցիչն էրի շարունակական ինքնակրթմանը ուղղված աշխատանքների կազմակերպում</p> <p>Աշխատանքի նկատմամբ մոտիվացիայի բարձրացում</p> <p>Տարբեր կարիք ունեցող սովորողների, ուսումնական գործընթաց և մասնակցության աճ</p>		
<p>գործողություն</p>	<p>Ժամանակացույց</p>	<p>պատասխանատուներ</p>	
<p>մասնագիտական վերապատրաստումների, սեմինարների, քննարկումների իրականացում, Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման</p>	<p>2023-2028թթ. Յուրաքանչյուր ուստարի</p>	<p>տնօրեն, ԴԱԿ, մեթոդ միավորման նախագահ</p>	
<p>Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական - մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակ</p>	<p>Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում</p>	<p>տնօրեն, մանկավարժական համակազմ, օպերատոր</p>	
<p>Ուսուցիչների արդյունավետության գնահատում և լավագույն ուսուցիչների խրախուսում(բազմաբնույթ ուսումնասիրություններ, շնորհակալագրեր, պատվոգրեր և այլն)</p>	<p>Յուրաքանչյուր ուստարվա վերջին</p>	<p>տնօրեն, մանկավարժական համակազմ,</p>	
<p>Ակնկալվող վերջնարդյունք</p>	<ul style="list-style-type: none"> • Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծում 		

	<ul style="list-style-type: none"> • Բոլոր սովորողների՝ ԿԱՊԿՈՒ ներառական կարիք ունեցող, օժտված, ընդունակ կամ որևէ բնագավառում հետաքրքրություն դրսևորած աշակերտի համար համապատասխան միջավայրի ստեղծում ,
գնահատման չափանիշներ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվութ յունների ձևերի ու ժամանակա ցույցի տնօրեն, քաղ. պաշտ.
հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ	<p>Ռիսկ- 1.Ուսուցիչների մասնագիտական, մեթոդամանկավար ժական կարողությունների, շահագրգռվածության պակաս:</p> <p>2. Նորարարությունների ներդրման ինքնավատահույան պակաս</p> <p>3. Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման և տեխնոլոգիաների կիրառության կարողունակություն ների պակաս</p> <p>Ինքնակրթության և ինքնագարգացման մոտիվացիայի պակաս</p> <p>Ռիսկերը մեղմող գործողություն- 1.Մասնագիտական, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, ուսուցման գործընթացի օրենսդրության իմացության սեմինարների, քննարկումների և վերապատրաստումների մասնակցություն</p> <p>2. Ինքնակրթության և ինքնագարգացման համապատասխան միջավայրի և գործիքների տրամադրում և մոտիվացիայի տարբեր ձևերի կիրառում (պարզևատրումներ, խրախուսումներ, պատվոգրեր և այլն)</p> <p>3. Մանկավարժների բազմակարծության, նրանց՝ դպրոցի ընդհանուր գործունեության որոշումների կայացման, կազմակերպման և իրականացման գործում մասնակցային դրսևորումների խրախուսում</p>
անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ մարդկային ռեսուրսներ	ԿԳՄՄ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀՄԿ, ՏՄԱԿ, Պետբյուջեից ֆինանսավորում տարակարգի, կամավոր ատեստավորման համար
վերահսկողության մեխանիզմները	Ամենամյա հաշվետվություններ և համապատասխան արձանգրություններ
Ֆինանսական աղբյուրներ	Պետական բյուջե

Այսօրյա կյանքում շատ է կարևորվում ՏՀՏ տեխնոլոգիաների և էլեկտրոնային կրթական ռեսուրսների ներդրումը դասապրոցեսում: 2020 թվականին կորոնավիրուսով պայմանավորված դպրոցն անցավ հեռավար ուսուցման, որը ցույց տվեց, որ մեր մանկավարժները ունեն ՏՀՏ վերապատրաստումների կարիք: Ուստի 2020 թվականից ուսուցիչները մասնակցել են սեմինարների, վեբինարների: Այժմ շատ վերապատրաստումներ և սեմինարներ անցկացվում են MS Teams միասնական կրթական հարթակի միջոցով, այդ իսկ պատճառով շատ կարևոր է ուսուցիչները գիտելիքների մշտական թարմացումները: Ունենք ուսուցիչներ, ովքեր դասերի ընթացքում կիրառում են տարբեր հարթակներ դասապրոցեսը ավելի արդյունավետ իրականացնելու համար: 2023-2024 ուս տարում իրականացվելու են սեմինարներ ուսուցիչների փորձի փոխանակելու նպատակով:

Դպրոցի կառավարումը իրականացվում է emis.am կայքի միջոցով: Մատյանները անցկացվում են matyan.emis.am կայքում: Ուսուցիչների թեմատիկ պլանները, դասդեկները, մ/մ նախագահների տարեկան հաշվետվությունները, տնօրենի տարեկան հաշվետվությունը տեղադրվում են lib.armedu.am կայքում, դասագրքերի պատվերները կատարվում են crm.dshh.am կայքի միջոցով: Դպրոցն ունի կայքէջ <https://krashen.schoolsite.am/>, որտեղ տեղադրվում են դպրոցի նախահաշիվը, հաստիքացուցակը, տարեկան և եռամսյակային հաշվետվությունները: Դպրոցն ունի facebook-յան էջ <https://www.facebook.com/profile.php?id=100032263998088>, որտեղ տեղադրվում է դպրոցի առօրյան, հայտարարություններ դպրոց- հասարակություն կապը ապահովելու համար:

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ուժեղ կողմ	Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ՝ բավարար հագեցվածությամբ, համապատասխան համակարգիչներ, պրոյեկտոր,	Դպրոցը կարիք ունի SMART դասասենյակների ստեղծման	Դիմի Լիսթ
	Դպրոցն ունի լիարժեք ինտերնետային համակարգ, WI-Fi սարքով, որը հասանելի է դպրոցի ողջ տարածքում	EMIS.am հարթակում էլեկտրոնային մատյանների լրացումը կատարվում է որոշակի թերություններով	
	Դասերի ընթացքում որոշ ուսուցիչներ կիրառվում են Kahoot և այլ ծրագրեր դասը ամփոփելու և ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով, Նոր ուս.տարում, համագործակցելով ԽորանԱրդ ինտելեկտուալ կենտրոն ՀԿ-ի հետ անցկացվելու են նաև դասեր Kahoot-ի միջոցով	Էլեկտրոնային գրատախտակի բացակայություն	

Դպրոցն ապահոված է արևային էներգիայով, որը համարվում է նորարարություն և ունի բարձր բնապահպանական նշանակություն, որին հետևում ենք նաև օնլայն	Արմաթ լաբորատորիայի բացակայություն
Դպրոցում տեղադրված է տեսահսկման համակարգ ավելի ապահով լինելու համար	
Դպրոցը ունի կայք և հարթակ Facebook-ում, որտեղ տեղադրվում են երեխաների պատրաստած տեսահոլովակները: 2023-2024- ուս տարում նպատակ կա ստեղծել Youtube-յան ալիք, որտեղ ավելի ակտիվ կտեղադրվի դասերը և դպրոցի առօրյան	
Ուսուցիչները դասերը անցկացնում են նաև համակարգչային դասասենյակում անհրաժեշտության դպքում	

<i>ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ, ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i>			
Նպատակների սահմանում	Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում դասապրոցեսում, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացում, փաստաթղթաշրջանառությունը առավելագույնս իրականացնել ՏՀՏ միջոցներով		
խնդիրների սահմանում	Աշխատակիցներին մոտիվացնել աշխատանքները կատարել ՏՀՏ-ով		
գործողություն		Ժամանակացույց	պատասխանատուներ
	Կազմակերպել նորարարական վերապատրաստումներ և փորձի փոխանակումներ մանկավարժների համար	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, ԴԱԿ
	Հաստատել հաշվետվությունները և տեղադրել պաշարների շտեմարանում	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, օպերատոր

Դասերի և միջոցառումների ժամանակ օգտագործել S2S միջոցներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Ուսուցիչներ, օպերատոր
Կառավարման խորհրդի և բոլոր խորհրդակցական մարմինների արձանագրությունները իրականացնել էլեկտրոնային տարբերակով	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, օպերատոր , խորհուրդների նախագահներ
Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնել դասաբաշխում, ձևավորել և հաստատել հաստիքների ցուցակը	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, օպերատոր, հաշվապահ
Ապահովել էլեկտրոնային մատյանների պատշաճ մատենավարություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, օպերատոր, ուսուցիչներ
Արդիականացնել դպրոցի պաշտոնական և ֆեսբուքյան էջի վարումը, ստեղծել Youtube-յան ալիք	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Օպերատոր
Ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող
Գրադարանում ունենալ աշխատանքային համակարգիչներ, էլեկտրոնային գրադարան, աշխատանքներ տանել	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող, գրադարանավար

	գրադարանային ֆոնդի թվայնացման համար		
Ակնկալվող վերջնարդյունք	<ul style="list-style-type: none"> • Ամբողջ դպրոցի աշխատողների հաշվետվությունները կատարել էլեկտրոնային համակարգով: • Պաշարների շտեմարանում տեղադրված նյութերի ավելացում: • Դասերի ընթացքում ՏՀՏ նորարարությունների օգտագործում, • Պլանավորման, արձանագրման, հաշվետվությունների էլեկտրոնային վարում, • Աշխատակիցների մոտիվացում դեպի ՏՀՏ գործիքով աշխատելու 		
հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ	<p>Ռիսկ- 1.Արտակարգ իրավիճակներով պայմանավորված առցանց կրթություն</p> <p>2.Ուսուցիչների թույլ մոտիվացիա դեպի ՏՀՏ կիրառում</p> <p>Ռիսկերը մեղմող գործողություն- 1.Վերապատրաստումների կազմակերպում ՏՀՏ ոլորտի վերաբերյալ ուսուցիչների և աշակերտների շրջանում</p> <p>2. Դպրոցի առօրյայի թափանցիկ գործունեության լուսաբանումը սոցիալական ցանցերում և դպրոցի կայքէջում</p>		
անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ մարդկային ռեսուրսներ	Հանդիպումներ, վերապատրաստումներ, ՏՀՏ դասընթացներ նոոթրոքեր, համակարգիչներ, պրոյեկտորներ,անխափան ինտերնետ կապ, ԿԳՄՄ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀԿ-ներ, հիմնադրամներ		
վերահսկողության մեխանիզմները	Զարգացման ծրագրի կատարող ականի ամենամյա հաշվետվություն, արձանագրություններ		
Ֆինանսական աղբյուրներ	Պետական բյուջե, ուսուցիչների անձնական միջոցներ, բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր		

Չափորոշիչը նպատակատուղիված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի կրթության և դաստիարակության հավասար իրավունքը: Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում ուշադրություն են դարձվում կրթական չափորոշիչների և ծրագրերի արմատավորման ուղղությամբ: Աշխատանք է կատարվել ուսման որակը բարելավելու, աշակերտների կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի և դիրքորոշումների զարգացման ուղղությամբ:

Շնորհիվ մանկավարժների կողմից կիրառվող մեթոդների և հնարների՝ աշակերտները ստանում են բավարար գիտելիքներ՝ զարգացնելու կոմպետենցիաները, այն է՝ գիտելիք, հմտություն, քննադատական մտածողություն, արժեքային համակարգ: Աշակերտները հաճախում են TUMO կենտրոն «Արտուտիկ» ձեռագործության կենտրոն, «Թղթապտույտ» խմբակ, Պարի խմբակներ և ունեն բազմաթիվ հավաստագրեր և շնորհակալագրեր:

Կրթության որակի գնահատումը սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը բնութագրող վերջնարդյունք է, ըստ ձեռք բերված գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների և արժեքների ձևավորման չափորոշչային պահանջներին համապատասխան:

Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:

Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:

Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար:

Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչներից

- ուսումնական բնագավառներ, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջներ
- շրջանավարտին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթական աստիճանների կարողունակություններ և ըստ կրթական աստիճանի ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ
- հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ

- սովորողների գնահատման ձևեր, սանդղակ, հաշվառման կարգ

2023-2024 ուս տարում ՀՊՉ դասարաններում կիրառվելու է սովորողների գնահատման երեք տեսակ.

- 1) հայտորոշիչ գնահատում,
- 2) ձևավորող գնահատում,
- 3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):


Ձևավորող գնահատումը դասապրոցեսում ուսուցչի ստեղծագործ աշխատանքի արդյունք կարող է լինել: Ամփոփիչ, բնութագրող գնահատման ձևերը մշակում է ԿԳՄՄՆ: Արդյունքի ցուցանիշը ավելի փոքր բաղադրիչի բաժանելու գործընթացը հիմնականում ձգվում է մեկ տրամաբանական գծով, որի վրա դասավորված են պահանջվող հմտությունները և գիտելիքը: Սովորողը պետք է ունենա չափորոշչով սահմանված հանրակրթական հիմնական հմտություն, դիրքորոշում, արժեքային համակարգ և կարողունակություններ:

Կրթության որակը դպրոցում գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

1. ուսումնական գործընթացի առկա վիճակը/ աշակերտի կարիքին համապատասխան ուսուցման կազմակերպում
2. կրթական գործընթացի կատարողականը/մանկավարժական և վարչատնտեսական աշխատակիցների աշխատանքի կազմակերպման հատուկ պլանավորված մեխանիզմի առկայություն/
3. կրթական գործընթացի արդյունավետությունը/հասարակական կարիքներին համապատասխան կրթության բոլոր մասնակիցների փոխգործակցություն
4. ուսումնադաստիարակչական միջոցառումների որակը/ դպրոցական միջոցառումների, խմբակներ, նախագծերի իրականացում և կարգապահության արմատավորում:

Վերոնշյալ կետերի նկատմամբ կիրականացվի վերահսկողություն, հետևողականություն, կմշակվի գործողությունների պլան՝ առկա սխալները, թերությունները վերացնելու համար:

Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը՝ ըստ կրթական աստիճանների



Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	14	15	18
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	14	15	
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը			1
Ուսումնական տարվա ընթացքում տեղափոխված սովորողների թիվը			

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն			
Ուժեղ կողմ	Թեմատիկ պլաններն ունեն չափորոշչային և ծրագրային համապատասխանություն	Նախագծային ուսուցում կազմակերպելու դժվարություններ	Դիմելի կողմ
	Ուսուցիչներն ակտիվորեն կիրառում են փոխներգործուն, համագործակցային մեթոդներ, ստեղծագործական մոտեցումներ	Սովորողների մոտ մրցունակության պակաս (աշակերտների քիչ թվով պայմանավորված գերազանցիկների պակաս)	
	Դպրոցում առկա են միջոցառումների բարձր մակարդակ		
	Կրթական կարիքի գնահատման դիտարկում		
	Մանկավարժների կողմից ցուցաբերվում է անհատական մոտեցում		

2022-2023 ուսումնական տարում դպրոցում իրականացվել են՝

Տարրական դպրոց՝
7 մեթոդական զեկույց
6 բաց դաս
5 միջոցառում

Միջին դպրոց՝
6 մեթոդական զեկույց
8 բաց դաս
3 միջոցառում

<i>Չափորոշային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն</i>			
Նպատակների սահմանում	<ul style="list-style-type: none"> Կրթության որակի բարելավում, չափորոշյալ սահմանված վերջնարդյունքների ապահովում Առարկայական օլիմպիադաներում մասնակցություն Մշտադիտարկումներ Արտադասարանական նպատակային միջոցառումների կազմակերպում՝ ճանաչողական էքսկուրսիաներ, ձևավորել թատրոն այցելելու մշակույթ 		
խնդիրների սահմանում	<ul style="list-style-type: none"> Կիրառել նոր գնահատման համակարգը, օգտագործել բնութագրիչները, Վերլուծել ներքին և արտաքին գնահատման արդյունքները սովորողին շահագրգռել նորարարություններ կիրառելով ՀՊԶ-ով նախատեսված վերջնարդյունքների ապահովում 		
գործողություն		Ժամանակացույց	պատասխանատուներ
	Վերլուծել ներքին և արտաքին գնահատման արդյունքները	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն
	Կազմակերպել առարկայական մրցույթներ, խաղեր, օլիմպիադաներ, ուսուցման ու դաստիարակության նոր մեթոդներ, բանավեճեր	Սկսած 2023թ-ի սեպտեմբեր	Տնօրեն, դասղեկներ, ուսուցիչներ, մեթոդ միավորման նախագահ, ԴԱԿ
	Ստեղծել ՀՊԶ-ին համապատասխան գիտելիքների և հմտությունների	2023-2024 ուս.տարի	Տնօրեն, մեթոդ միավորման նախագահ

	զարգացման ամուր հիմքեր		
	Փոխայցելություններ կազմակերպել մոտակա այլ ուսումնական հաստատություններ, որտեղ ուսման որակի խթանման որևէ նորարարական միջոցառում է կատարվել	2023-2024 ուս.տարի	Տնօրեն, մեթոդ միավորման նախագահ, ԴԱԿ, ուսուցիչներ
	Սահմանել խրախուսական միջոցներ՝ շնորհակալագրեր, գովասանագրեր, այլ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, ԴԱԿ
	Յուրաքանչյուր դպրոց ընդունվող նոր աշակերտի տալ ինքնատիպ կոչում, որը նրան կմոտիվացնի ավելի լավ սովորել	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ
	Կազմակերպել ճանաչողական այցեր արհեստների և արվեստների կենտրոններ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ
Ակնկալվող վերջնարդյունք	Սովորողի կողմից պատասխանատվության բարձրացում ուսման նկատմամբ		
հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ	Ռիսկ - Կրթության նկատմամբ ոչ հետևողական վերաբերմունքը Ռիսկերը մեղմող գործողություն - Գնահատման արդյունքների վերաբերյալ ծրագրերի կազմում ՀՊԶ-ով նախատեսված գործողությունների հետևողական իրականացում, նոր գնահատման համակարգի ներդրում Արտադասարանական խմբակների ստեղծում		
անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ	Հանդիպումներ, արձանագրություններ, Ներքին գնահատում ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀՄԿ, ՏՄԱԿ, ՀԿ-ներ, Փորձառու ուսուցիչների փորձի փոխանակում		
վերահսկողության մեխանիզմները	Հայտորոշիչ թեստ, թեմատիկ գրավոր աշխատանքներ, բանավոր հարցումներ		
Ֆինանսական աղբյուրներ	Պետական բյուջե, կամավորական սկզբունք		

1990-ական թթ.-ից սկսած Հայաստանն ընդունել է միջազգային և տեղական մի քանի կարևոր փաստաթղթեր, որոնք նպաստել են երկրում ներառական կրթության քաղաքականության մշակմանն ու ներդրման ընդլայնմանը: Ներառման գործում կարևոր ներդրումներից մեկը մանկավարժի ուշադրության կենտրոնացումն է սովորողների բազմազանության վրա: Հայաստանում մասնագետների կողմից քայլեր են արվում հաշմանդամության ընկալումը վերափոխելու համար: Դասարանում համընդհանուր ձևավորման օգտագործումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը: Համընդհանուր ձևավորումն ուղղված է սովորողներին՝ որպես <<սովորական>> ու <<առանձնահատուկ>> երեխաների տարբերակումը վերացնելուն, ելնելով նրանից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում և որ բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին:

Ներկա պահին դպրոցում չկան ներառական կրթություն ստացող աշակերտներ, սակայն դպրոցը և ուսուցչական համակարգը պատրաստ է իրականացնել աշխատանքներ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ: Դասասենյակներում, միջանցքներում, գրադարաններում տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն, հատակը գտնվում է մեկ հարթության վրա, դպրոցում բացակայում են շեմերը:

Կրթության կազմակերպման բազմակողմանիությունն ու մասնակցային արժեքային համակարգի ձևավորումն, կրթության մատչելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Հանրակրթության մասին օրենքով, երեխաների իրավունքներին առնչվող միջազգային կոնվենցիայով և հոչակագրի դրույթով՝ հիմք ընդունելով ԿԳՄՍ նախարարի 30. 12. 2022թ. N88 հրամանը:

Նոր ուս տարում իրականացվելու են ներառական կրթության ապահովման համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստումներ, իրականացնել երեխաների հավասար իրավունքներին, բուլինգին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:

Կրաշեն գյուղում կան եզդիական համայնքին պատկանող ընտանիքներ, որոնց երեխաները հաճախում են մեր դպրոցը և լիարժեք ընդգրկված են դասապրոցեում և դպրոցական կյանքում:

Այս պահին դպրոցում ռովորում է Արցախից ժամանած մեկ աշակերտ: Թե ուսուցիչները, թե աշակերտները անում են ամեն ինչ երեխային լիարժեք ուսումնական պրոցեսում ներգրավելու համար: Երեխայի հետ առանձին աշխատանքներ է տանում ուսուցչի օգնականը, դասերին լիարժեք մասնակցություն ապահովելու համար: Դասուցիչը կազմակերպել է զբոսանք և այցելություն թանգարան դասընկերների հետ կապը ամրապնդելու համար:

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՌԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմ	Դպրոցում երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ ուսուցչամանկավարժական համակազմի ազատ կամարտահայտության իրավունքները	Սովորողների կողմից իրենց իրավունքների ու պարտականությունների իմացության ոչ բավարար մակարդակ	Դուրս
	Բավարարվում է երեխաների կրթության իրավունքի իրացումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները	Տարրական դասարաններում կան ուսումնական առարկաների ուսումնառությունից հետ մնացող աշակերտներ, որոնց հետ աշխատում է ուսուցչի օգնականը	
	Առկա է հասարակության լիիրավ անդամի գիտակցության բարձր մակարդակ	Կա արտադասարանային ընթերցանության պակաս, երեխաները գրքի նկատմամբ հատաքրքրություն քիչ են ցուցաբերում	
	Դպրոցը ունի թեքահարթակ	Սովորողների հետաքրքրությունը բնագիտական առարկաների նկատմամբ սակավ է	
	Հաստատությունում ապահովվում է բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը և բացառում է սովորողի անձի նկատմամբ ֆիզիկական և (կամ) հոգեբանական բռնությունը	Դպրոցում կան աշակերտներ, որոնք դժվարությամբ են ինտեգրվում շարժապատում	
	Դպրոցում սովորում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ		
	Միջոցառումների ժամանակ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ երեխաները արտասանում և երգում են նաև իրենց մայրենի լեզվով		
	Դասապրոցեսում օգտագործվում են տարբեր մեթոդներ ամբողջ դասարանին դասապրոցեսում ներառելու համար		
	Դպրոցի վերանորոգումից հետո նկատվում է աշակերտների թվի աճ		
	Ձևավորված է բավարար պատշաճ վարվելակերպ և վարքագիծ վարչական, մանկավարժական, ծնողական,		

աշակերտական և սպասարկող համակազմում՝ անձնական և աշխատանքային փոխհարաբերություններում		
Առկա է սովորողների ինքնաարտահայտման և ինքնադրսևորման, սոցիալական անհատի ձևավորման պայմանները		

Բազմակարծիք, նեոարական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն			
Նպատակների սահմանում	Սովորողների անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար ստեղծել համապատասխան պայմաններ		
Խնդիրների սահմանում	<ul style="list-style-type: none"> Ստեղծել բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր Զարգացնել յուրաքանչյուր սովորողի ներուժը համատեղ գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու և նպատակին հասնելու համար 		
գործողություն		Ժամանակացույց	պատասխանատուներ
	Նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ
	Ապահովել յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ
	Կազմակերպել բաց դասեր, սեմինարներ, դասախոսություններ հանդիպումներ, որոնց ընթացքում աշակերտները մանրամասն կձևանորոգեն իրենց կրթության երևույթին	2023-2024 ուս.տարի	Տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ

	Դաստիարակի ժամերին պարբերաբար անդրադառնալ բուլինգին, վերհանել առկա խնդիրները, քննարկել երևույթը, խոսել դրա վատ ազդեցությունների մասին	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, դաստիարակներ
	Նպաստել սովորողների բազմակողմանի դաստիարակության կազմակերպմանը	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, դաստիարակներ, ուսուցիչներ, հոգեբան, ուսուցչի օգնական
	Սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն և նախաձեռնություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, դաստիարակներ, ուսուցիչներ, հոգեբան, ուսուցչի օգնական
	ակտիվորեն մասնակցել հասարակական ակտիվությունը խթանող, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը նպաստող ծրագրերին	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, ԴԱԿ, դաստիարակներ
	Համագործակցել աշակերտների քաղաքացիական գիտակցության ձևավորմանը նպաստող երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, դաստիարակներ, ուսուցիչներ,

	Ուսումնական առարկաներից հետ մնացող աշակերտներին աջակցելու, դասերին լիարժեք մասնակցելու նպատակով ներգրավվել ուսուցչի օգնականին, հոգեբանին	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Տնօրեն, դասղեկներ, ուսուցիչներ, ուսուցչի օգնական
Ակնկալվող վերջնարդյունք	<ul style="list-style-type: none"> • սովորողների ինքնակառավարման, ինքնագարգացման և հասարակական գործունեության դրսևորում • Սովորողին, որպես ՀՀ քաղաքացի, հասարակության լիիրավ անդամ պատրաստում 		
հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ	<p>Ռիսկ- 1.Անձի կամային որակներ որոնք խանգարում են սովորողին ուսումնառության և ուսուցչին՝ աշխատանքային գործունեության մեջ</p> <p>2.Դպրոց-աշակերտ-ծնող կապի թուլացում</p> <p>3.Հալածանքի, օտարման, բռնության, բուլինգի դեպքեր դպրոցում</p> <p>Ռիսկերը մեղմող գործողություն- 1.Բարձրացնել ուսուցիչների և աշակերտների գիտակցական մակարդակը</p> <p>2.Ներդպրոցական վերահսկողության իրականացում</p> <p>3. Մարդու իրավունքների և ազատությունների պահպանում</p> <p>4.Արտադասարանական խմբակների ստեղծում</p>		
անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ մարդկային ռեսուրսներ	<p>վերապատրաստումներ, դասղեկի ժամեր, գրականություն, կրթական ինովացիաներ, էքսկուրսիաներ, միջոցառումներ, բաց դասեր, ՀԿ – ների ծրագրեր, գրույց, դասախոսություն, բանավեճ</p> <p>ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ,հիմնադրամներ, համագործակցային աշխատանք</p>		
վերահսկողության մեխանիզմները	<p>Դպրոցի աշխատակազմն արդիականացնում է իր գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում</p> <p>Վերահսկողության մեխանիզմը- գարգացման ծրագրի կատարող ականի ամենամյա հաշվետվություն, արձանագրություններ</p>		
Ֆինանսական աղբյուրներ	Պետական բյուջե, կամավորական սկզբունքով, ծնողական ներդրումներ		

Ուսումնական հաստատությունն ունի որակյալ ուսուցչական անձնակազմ, և ուսուցիչները տիրապետում են դասավանդման ժամանակակից մեթոդներին:

Բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչների թիվը՝ 8, ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը՝ 8 նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում են անցել բոլոր ուսուցիչները: Ուսումնական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվել են բաց դասերի, փոխադարձ դասալսումներ, կատարվել են դասալսումներ մ/մ նախագահի և տնօրենի կողմից:

Կարևոր է ուսումնական հաստատությունում ստեղծել աշխատանքային այնպիսի միջավայր որը կնպաստի ազատ և հստակ հաղորդակցմանը, կխրախուսի աշխատակիցների ակտիվ մասնակցությունն ու ազատ մտածողությունը և համագործակցությունը: Նման պայմաններում աշխատող ուսուցիչները կարող են ստեղծագործել, աշակերտների առաջադիմության աճ գրանցել, հաջողություններ արձանագրել օլիմպիադաներում: Ուսուցչին իր կատարած աշխատանքի համար կարելի է խրախուսել դրամական պարգևով, պատվոգրով, ինչպես նաև հուշ-մրցանակով: Խրախուսանքը պետք է լինի անկեղծ ու անմիջական:

Ուսուցչի դասավանդումը գնահատելու համար հարկավոր է նկատի ունենալ ուսուցողական նպատակը, դասավանդման յուրացման համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի ջանքերի արդյունքները:

Հաջողություններ արձանագրելիս պետք է արժևորվի թե՛ ուսուցչը, թե՛ աշակերտը:

Ուսուցչի աշխատանքը գնահատելու համար պետք է ունենալ հստակ ձևավորած ձևաչափ, նաև հաշվի առնել ուսուցչի ներկայացրած հաշվետվությունները:

Ձևաչափի նմուշ

Ուսուցման որակ	Զեկույց մ/մ նիստում	Օրինակ էլի դասեր	Միջոցառումների կազմակերպում	Ներքին աշխատանքային կարգապահության մակարդակը	Ծնողների կողմից արժանացել է շնորհակալագրի	Օլիմպիադաներում աշակերտների մասնակցություն	այլ

Վերոնշյալ թերթիկը կարող է ենթարկվել փոփոխության:

Նոր ուս տարում ներդրվելու է ուսուցիչների խրախուսման նոր մեթոդներ ինչպիսիք են պատվոգրերը, հավաստագրերը, ամսվա լավագույն ուսուցիչ/դասղեկ, կիսամյակի լավագույն ուսուցիչ/դասղեկ, տարվա լավագույն ուսուցիչ/դասղեկ:

Խրախուսման նման մոտեցումը ուսուցիչների մոտ կառաջացնի մոտիվացիա, պարզևատրում, շնորհակալագիր, դրամական պարգև ստանալու նպատակով ինքնակրթվելու:

Ուսուցիչը դադարում է ուսուցիչ լինելուց, եթե չի ինքնակրթվում: Իսկ ինքնակրթվելուն նպաստում է դպրոցի տնօրենը՝ իր հստակ պահանջով:

Ինքնակրթության գնահատման ձևաչափ

Մասնակցությունը վերապատրաստման դասընթացին	Տարվա ընթացքում ուսումնասիրած մեթոդական գրականություն	Զեկուցում, բաց դաս, փորձի հաղորդում

Վերոնշյալ թերթիկը կարող է ենթարվել փոփոխության:

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ			
Ուժեղ կողմ	Առկա է մանկավարժական բանիմաց համակազմ, որը բաց է նոր գիտելիքի համար	Տարակարգ ունեցող ուսուցչի տարակարգի ժամկետը լրացել է, կամավոր ատեստավորված ուսուցիչներ չկան	Թույլ կողմ
	Մանկավարժները համախմբված են մեկ նպատակի շուրջ	Չնայած ինքնակրթությամբ զբաղվում են գրեթե բոլոր ուսուցիչները, բայց չեն գրվում ինքնակրթության պլաններ	
	Ուսուցչի թափուր տեղի բացակայություն	Փոխադարձ դասալսումների պակաս	
	Մանկավարժական և միջանձնային առողջ մթնոլորտ	SZS-ի ոչ լիարժեք կիրառում	
	Ինքնազարգացման բաց ռեսուրսների առկայություն	Տարեց մանկավարժների մոտ կարծրատիպերից հրաժարվելու դժվարին ճանապարհ	
	Կազմակերպվող վերապատրաստումներ	Ուսուցչի թափուր պաշտոնի առկայություն	

Աշխատակազմի արժևորման խրախուսման, ինքնակրթության հնարավորություններ			
Նպատակների սահմանում	<ul style="list-style-type: none"> • Խթանել աշխատակիցների աշխատանքը • Դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում • Օժանդակել ինքնակրթությանն ուղղված նախաձեռնություններին • Նպաստել նոր գաղափարների ներդրմանը 		
խնդիրների սահմանում	Ծանրաբեռնվածություն Մոտիվացիայի պակաս Նորարարությունների մերժում		
գործողություն		Ժամանակացույց	պատասխանատուներ
	Ապահովել և վերահսկել դպրոցում աշխատակիցների բարեվարձության վարձարկանոսները	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	տնօրեն, ԴԱԿ, մեթոդ միավորման նախագահ Կառավարման խորհուրդ, հաշվապահ
	Ձևավորել ինքնակրթության միջավայր	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	տնօրեն, մանկավարժական համակազմ,
	Վերլուծել արդյունքները գնահատել լավագույններին և պարգևատրել	Յուրաքանչյուր կիսամյակ	տնօրեն, մանկավարժական համակազմ, հաշվապահ
գնահատման չափանիշներ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվութ յունների ձևերի ու ժամանակա ցույցի տնօրեն, քաղ. պաշտ.		
հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ	Ռիսկ- 1.Ինքնակրթության և Ինքնազարգացման մոտիվացիայի պակաս 2.Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ, որը հնարավորություն էն չի տա կատարել դրամական խրախուսում Ռիսկերը մեղմող գործողություն- Ինքնակրթության և և ինքնազարգացման համապատասխան և միջավայրի և գործիքների տրամադրում և մոտիվացիայի տարբեր ձևերի կիրառում Գնտել խրախուսանքի այլընտրանքային միջոցներ		
անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ մարդկային ռեսուրսներ	ԿԳՄՄ, լիազոր մարմին, պետբյուջե, արտաբյուջե, բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր		
վերահսկողության մեխանիզմները	Ամենամյա հաշվետվություններ և համապատասխան արձանգրություններ		
Ֆինանսական աղբյուրներ	Պետական բյուջե, արտաբյուջե, բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր		

Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներից:

Դպրոցի բյուջեի պլանավորումը նախագծի կազմումը, նյութական միջոցների կարիքի գնահատումը կատարվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբերի 1-20 ընկած ժամանակահատվածում: Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկներ ստանալու, պարզաբանումներ տալու նպատակով՝ բյուջեի նախագիծը քննարկվում է դպրոցի մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների կողմից սեպտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 15-ը: Եթե կան դիտողություններ և առաջարկություններ բյուջեի նախագծի վերաբերյալ, ապա մշակվում է բյուջեի նախագծի վերջնական տարբերակը: Նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը բյուջեի նախագիծը քննարկվում է դպրոցի կառավարման խորհրդում: Դպրոցի կառավարման խորհուրդը տնօրենին ներկայացնում քննարկում է նախագիծը և հավանություն տալիս: Դպրոցի անհրաժեշտ կարիքների համար պահանջվող ծախսերի պատվիրակումը տնօրենը համաձայն նոր կարգի, տրամադրում է համակարգողին: Համակարգողը գնահատում է, կազմում է նախահաշիվը և ներկայացնում է լիազոր մարմին: Եռամսյակային համամասնությանը կազմված ծախսերի նախահաշիվները համակարգողը ներկայացնում է խորհրդի քննարկմանը, տեղադրում է դպրոցական կայքի հայտարարությունների համար նախատեսված էջում:

Դպրոցը կարող է մրցույթային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակներով:

1. Իրականացնել հատուկ կամ լրացուցիչ կրթական և ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար
2. Իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և (կամ) այլընտրանքային ծրագիր
3. Կազմակերպել դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստական հավաքներ և դասընթացներ
4. Ստեղծել ումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր (այդ թվում՝ էլեկտրոնային):

Ինչպես գիտենք դպրոցի բյուջեի նախագծման, հաշվետվողականության և հանրայնացման գործառույթների անմիջական պատասխանատուն հանդիսանում է դպրոցի տնօրենը:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում: Դպրոցի առկա և ձեռք բերված գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում:

Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները.

Հատկացումները միջոցների սղության դեպքում, որպես կանոն, չեն փոփոխվում.

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- Եկամտահարկի վճարներ /այս ուղղություններով բյուջետային

Բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են, կամ ընդհանրապես չեն լինում/.

- Գրասենյակային և տնտեսական ծախսեր
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր /այս ուղղություններով
- Կապի ծառայությունների ծախսեր

- Էլեկտրաէներգիայի ջեռուցման ծախսեր
- Կոմունալ ծառայությունների վճարներ

Արևային էներգիայի ձեռքբերման հետ կնվազի դպրոցում էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի 1790-Ա/2 հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում ներառված ուսումնական հաստատությունների ցանկը: Այս ցանկում ընդգրկված ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը շարունակելու է իրականացվել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի 1262-Ն հրամանին համապատասխան: Կրաշենի հիմնական դպրոցը նույնպես այս ցանկում է: Սակայն դպրոցում գործելու են Հանրակրթության պետական չափորոշիչի ներդրմամբ պայմանավորված և Նախարարության կողմից իրականացվող ֆինանսական ծրագրերը: Ըստ նոր ֆինանսական ծրագրերի դպրոցի մանկավարժների աշխատավարձի չափը զգալի կբարձրանա:

<i>Բյուջեի ծախսերի հիմնական ուղղությունները</i>
Աշխատավարձ և հավելավճարներ
Էներգետիկ ծառայություններ
Գրասենյակային նյութեր
Կենցաղային և հանրային նյութեր
Աշխատողների մասնագիտական զարգացման ծառայություններ
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ
Պարտադիր վճարներ
Այլ ծախսեր /դասագիրք/
Վարչական սարքավորումներ
Այլ մեքենաներ և սարքավորումներ
Մասնագիտական ծառայություններ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱՆՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ			
Ուժեղ կողմ	Հաստատության պետական բյուջեն բավարարում է աշխատակիցների աշխատավարձը ժամանակին վճարելու համար	Տրանսպորտային փոխհատուցում չի տրվում բոլոր աշխատակիցներին	Թույլ կողմ
	Դպրոցը փոխհատուցում է երթևեկող ուսուցիչների ճանապարհածախսը	Դպրոցը չունի եկամտի այլ աղբյուրներ	
	Կազմակերպվում է դպրոցապահպանություն՝ հաշվի առնելով հատուկ մասնագիտական ծառայությունները (ախտահանում, դեռատիզացիա)	Դպրոցը ունի բազմահամակազմ դասարաններ	
	Շենք-շինությունների ընթացիկ նորոգումների, պահպանման վերակառուցման նպատակով կատարվում են նպատակային ծախսեր		
	Դպրոցական կայքում հրապարակվում են դպրոցի նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները		
	Բյուջեից տրամադրվում է բավարար գումար ՏՀՏ սարքերի պահպանման և նորոգման համար		
	Հովանավորների միջոցով կատարվել է դպրոցի վերանորոգում, շենքի արտաքին հատվածի ներկում		
	Կառավարության հատկացված գումարով կատարվել է արտաքին և ներքին վերանորոգման աշխատանքներ, տարածքի սալիկապատում, ասֆալտապատում		
	Ձեռք է բերվել համակարգիչ, լուսապատճենահանող սարքեր		

Ստորև ներկայացվում է բյուջեի տարեկան ծախսերի մասին տեղեկություն.

<i>Բյուջե</i>	<i>2022</i>
Տարեկան ֆինանսավորում/սուբսիդիա տարրական և հիմնական ծրագրերով/	18221.4 հազար
Որից սնունդը	345.5
Տարեսկզբի մնացորդը	1582.6
Այլ եկամուտներ /տարածքի վարձակալություն/	0
Դրամաշնորհ/տարակարգ ստացած ուսուցիչների	152.7
Տրանսպորտային ծախսեր	180.5
Տարեվերջի մնացորդ	2322.5

Բյուջեի ծախսերի հիմնական ուղղությունները	Օրագրային 2022	Փաստացի ծախս 2022 Հգ. Դրամ
Աշխատավարձ և հավելավճարներ	17403.8	16568.2
Էներգետիկ ծառայություններ	530.0	430.4
Գրասենյակային նյութեր	163.0	163.0
Կենցաղային և հանրային նյութեր	125.4	125.4
Աշխատողների մասնագիտական զարգացման ծառայություններ	48.0	48.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	390.5	390.5
Պարտադիր վճարներ	30.0	30.0
Այլ ծախսեր /դասագիրք/	5.5	5.5
Վարչական սարքավորումներ	72.0	72.0
Այլ մեքենաներ և սարքավորումներ	55.0	55.0
Մասնագիտական ծառայություններ	80.0	80.0

<i>Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն</i>			
Նպատակների սահմանում	Ունենալ ֆինանսատնտեսական գործողությունների պլան		
խնդիրների սահմանում	<ul style="list-style-type: none"> • Մասնակցել դրամաշնորհային ծրագրերի • Խորացնել համագործակցությունը համայնքի հետ • Խորացնել համագործակցությունը հովանավորներ • Մասնակցել պետությունից ֆինանսավորվող լրացուցիչ ծրագրերի 		
գործողություն		Ժամանակացույց	պատասխանատուներ
	Մասնակցել պետությունից ֆինանսավորվող լրացուցիչ ծրագրերի	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող
	Մասնակցել տարբեր դրամաշնորհային ծրագրերի	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող
Ակնկալվող վերջնարդյունք	Դպրոցի ֆինանսական միջոցների ընդլայնում		
հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ	<p>Ռիսկ- Լրացուցիչ ֆինանսավորվող ծրագրեր կազմելու, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մոտիվացիայի պակաս :</p> <p>Ռիսկերը մեղմող գործողություն- 1.Դպրոցի բյուջեի ճիշտ և ժամանակին պլանավորում, արտաբյուջեի ձևավորում</p> <p>2. Լրացուցիչ ֆինանսական ներդրումների ընդլայնմանն ուղղված հետևողական աշխատանք</p>		
անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ մարդկային ռեսուրսներ	նյութատեխնիկական բազա՝ հարմարեցված միջավայր ԿԳՄՍ, լիազոր մարմին, Աջակիցների խորհուրդ, տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող		
վերահսկողության մեխանիզմները	Ամենամյա հաշվետվություններ և համապատասխան արձանգրություններ		
Ֆինանսական աղբյուրներ	Պետական բյուջե, բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր		

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

